# Նոր սերնդի դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության ստեղծման չափանիշներ և գործիքակազմ

ՆԱԽԱԳԻԾ

**ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ**

ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ԵՎ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

Հավանություն տալ «Նոր սերնդի դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության ստեղծման չափանիշներին և գործիքակազմին»՝ համաձայն Հավելվածի:

Հավելված
**ՀՀ կառավարության 2017 թվականի**
**---նիստի արձանագրային որոշման**

**ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ**

**ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ**

## I. Ամփոփ համառոտագիրը

1. Նոր սերնդի ուսումնամեթոդական նյութերը կրթության որակի բարձրացման և ժամանակակից կրթական միջավայրի ստեղծման հենքային պայման են: Դրանք ոչ միայն իրականացնում են տեղեկատվական գործառույթ, այլ նպաստում են ուսուցման գործընթացի կազմակերպմանն ու սովորողների ինքնուրույն, փոխներգործուն գործունեության ապահովմանը: Ժամանակակից դասագրքի հիմնական նպատակն է՝ բացահայտել կրթության բովանդակության, պետական հանրակրթական չափորոշչի և առարկայական ծրագրերի համապատասխանությունը:
2. Դասագիրքը պետք է համապատասխանի դիդակտիկական սկզբունքներին, ուսուցման նպատակներին և իրականացնի սովորողների աշխարհայացքի, բարոյական նորմերի ձևավորման գործառույթներ:

## II. Ներածություն

3. Դասագրքերի որակի գնահատման և դրանց բարելավման հարցը մշտապես կրթության քաղաքականություն մշակողների, գիտնականների, մանկավարժ-հետազոտողների, հրատարակչությունների և հասարակության լայն շերտերի ուշադրության կենտրոնում է, քանի որ ուսուցման/ուսումնառության արդյունավետությունը էապես պայմանավորված է ուսումնական նյութերի, մասնավորապես՝ դասագրքերի որակով:
4. Ժամանակակից գիտամանկավարժական գրականության մեջ դպրոցական դասագիրքը դիտարկվում է որպես փոխկապակցված բաղադրիչների բազմագործառույթ համակարգ, որի հիմքում ընկած է

տվյալ երկրի՝ պաշտոնապես հաստատված կրթության բովանդակությունը, և որի բաղադրիչներն են՝ դասագրքի կառուցվածքային, մեթոդաբանական տարրերը, որոնք ուղղված են գրքի գործառույթների իրականացմանը:

5. Հետևաբար, արդյունավետ դասագրքեր ստեղծելու համար պետք է, որ տվյալ երկրի կրթության բովանդակությունը և դասագրքի բաղադրիչ տարրերը փոխկապվածության և փոխազդեցության մեջ գտնվեն: Կարևոր է, որ դասագիրք ստեղծողներն այդ հանգամանքը ուշադրության կենտրոնում պահեն՝ դասագրքի շարադրմանն անցնելուց առաջ որոշակիացնելով այն մեթոդաբանական և արժեքային մոտեցումները, որոնք տվյալ դասագրքի հիմքն են դառնալու և հստակ պատկերացնելով՝ ինչպես է այն դասարանում «աշխատելու»:
6. «Դասագրքաստեղծ խմբերը հիմնականում ձևավորվում են ըստ հետևյալ մոտեցումների.

ա. Դասագրքերը գրվում են տվյալ առարկայի գիտնականների կողմից. պատմության դասագրքերը՝ պատմաբանների, կենսաբանության դասագրքերը՝ կենսաբանների և այլն..., և այս սկզբունքով գրված դասագրքերի շեշտադրումը առավելապես ակադեմիական գիտելիքների, ճշգրտվածության և պատշաճության վրա է հիմնված:

բ. Երկրորդ, դասագրքերը գրվում են մեթոդիստների և մանկավարժների կողմից՝ հիմնական շեշտադրումն անելով դիդակտիկ սկզբունքներին համապատասխանող բովանդակության ընտրության, դասագրքի՝ մեթոդապես մտածված կառուցվածքի վրա: Հազվադեպ վերը նկարագրված երկու մոտեցումները համատեղվում են»:

6. 21-րդ դարի հմտություններին (**21st century skills)** զուգորդվում են այն գիտելիքները, հմտությունները, գործելակերպերը և անձնային որակները, որոնք խթանում են՝

- քննադատաբար մտածելը, խնդիրներ լուծելը, տրամաբանելը, վերլուծելը, մեկնաբանելը, տեղեկությունները համադրելը,
- հետազոտական հմտություններն ու կարողությունները, հարցադրումներ անելու կարողությունը,
- ստեղծագործաբար մտածելն ու գործելը, հետաքրքրասիրությունը, երևակայությունը, նորովի մտածելակերպը, ինքնադրսևորումը,
- վճռականությունը, համառությունը, ծրագրելու կարողությունը, կազմակերպվածությունը, նախաձեռնողականությունը, իրավիճակին հարմարվելը,
- բանավոր և գրավոր հաղորդակցվելու, հանրությանը դիմելու և ներկայանալու, լսելու կարողությունները,
- առաջնորդությունը, թիմային և համատեղ աշխատանքը, համագործակցելը, աշխատանքային վիրտուալ տարածքներից օգտվելու կարողությունը,
- տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների իմացությունը, մեդիա- և համացանցային գրագիտությունը, տվյալները վերլուծելու և մեկնաբանելու կարողությունը, ծրագրավորումը,
- քաղաքացիական, էթիկական և սոցիալական արդարության սկզբունքների ընկալումը,

- տնտեսական և ֆինանսական գրագիտությունը, ձեռնարկատիրական կարողությունները,
- համաշխարհային միտումներին, մշակութային բազմազանությանը տեղյակ լինելը, մարդասիրությունը,
- գիտական մտածելակերպն ու մոտեցումները,
- շրջակա միջավայրի և կայուն զարգացման մասին տեղյակ լինելը, էկոհամակարգերի ընկալումը,
- առողջ ապրելակերպի, ներառյալ՝ սննդի և սննդակարգի, ֆիզիկական ակտիվության, հանրային առողջության և ապահովության մասին տեղեկացվածությունը:

7. Վերոնշյալ նպատակների իրագործմանն ուղղված գործընթացներ ընթանում են գրեթե բոլոր երկրներում, սակայն շատ չեն այն երկրները, որոնք ունեն հստակ սահմանված և ճշգրիտ կիրառվող չափանիշներ, քանի որ ժամանակի և տեխնոլոգիական առաջընթացի ամենօրյա մարտահրավերները դրանց վերանայման և փոփոխման առիթ են դառնում: Բացի այդ՝ դժվար է ստեղծել համապարփակ չափանիշներ, որոնք կներառեն բոլոր տարիքային խմբերն ու բոլոր առարկաները:
8. Նկարագրված խնդիրներն արդիական են նաև ՀՀ-ում և անմիջականորեն արտացոլվում են կրթական համակարգում: Վերոհիշյալ հմտությունների զարգացումն ապահովելու անհրաժեշտությունը կրկնակի բարդացնում է դասագրքաստեղծ խմբերի և կառույցների աշխատանքը:
9. Դասագրքերին, դրանց կից ուսուցչի ձեռնարկներին և առհասարակ ուսումնական նյութերին ներկայացվող պահանջներում անդրադարձ չի եղել սովորողի՝ սեփական ուսումնառությունը կազմակերպելու և գնահատելու կարողությունների զարգացմանը, ուսուցման/ուսումնառության մեթոդաբանությանը և այլն:
10. Հայաստանի դպրոցներում գործող բոլոր դասագրքերն անցել են գնահատման և երաշխավորման գործընթացներ, սակայն դրանց որակի և կիրառման արդյունավետության վերաբերյալ կան որոշակի դժգոհություններ:

- **Նախապատմություն. Խնդիրներ, նպատակներ**

11. Հայաստանի Հանրապետությունում կիրառվող դասագրքերին, ուսուցչի ձեռնարկներին ներկայացվող պահանջների վերաբերյալ առաջարկություններ մշակելու նպատակով դիտարկվել է մի շարք երկրների փորձը՝ կրթական կառույցների պաշտոնական կայքերի և փաստաթղթերի ուսումնասիրման ճանապարհով: Ընտրությունը կանգ է առել այն երկրների վրա, որոնք ունեն դասագրքերի՝ պետականորեն կամ տարածքային կառույցների կողմից հաստատված ընտրության ընդհանրական չափանիշներ: Այդ երկրներից են՝ Հոնգ Կոնգը և Հարավային Կորեան, որոնց կրթական հաջողությունները գրեթե նույն զուգահեռականի վրա են Սինգապուրի հետ, ԱՄՆ-ն և Կանադան, որոնց կրթական մշակույթը տարբեր կրթական միջազգային ծրագրերի

միջոցով կարծես թե ավելի ծանոթ է ՀՀ-ում, Կոսովոն՝ որպես նոր ձևավորված պետություն, որն իր առաջին քայլերն է անում նման գործընթացներում, Ռուսաստանը և Ղազախստանը, որոնք վերջին դարում ավելի շատ առնչություն են ունեցել և փոփոխությունների առումով ընդհանրություններ ունեն Հայաստանի Հանրապետության հետ (ուսումնասիրության ամբողջական տարբերակը ներկայացվում է առանձին հավելվածով):

12. Սույն նախագծի նպատակը Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցների դասագրքերին և ուսուցչի ձեռնարկներին ներկայացվող պահանջների մշակումն է:
13. Առաջադրված խնդիրներն են՝

- **նպաստել** չափորոշչային պահանջների կատարումը վերահսկելու մեխանիզմների բարելավմանը.
- **ապահովել** դասագրքաստեղծ հեղինակային խմբերին՝ դասագրքերի համար մշակված ավելի հստակ պահանջներով.
- **ապահովել** դասագրքերն ու ուսուցչի ձեռնարկները երաշխավորող և հաստատող փորձագիտական խմբերին և կառույցներին՝ հնարավորինս չափելի պահանջներով.
- **խրախուսել** ուսուցիչների՝ դասագրքերի և այլ ուսումնական ռեսուրսների ինքնուրույն ընտրությունը.
- **խթանել** գործող դասագրքերի բովանդակության, դիդակտիկական համակարգի, լեզվի, կառուցվածքի և արժեհամակարգի բարելավումը.
- **նպաստել** ուսուցիչների մասնագիտական զարգացմանը՝ արդյունավետ ուսումնական նյութերով աշխատելու հնարավորություն ընձեռելով.
- **նպաստել** որակյալ ուսումնական նյութերի միջոցով սովորողների ուսուցման/ ուսումնառության գործընթացը ավելի գրավիչ, արդյունավետ դարձնելուն.
- **նպաստել** կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսուցման/ուսումնառության գործընթացի բարելավմանը:

14. Գործիքակազմի, չափանիշների, արդյունավետ լինելը կախված է այդ գործիքի չափելի լինելուց: Որքան չափելի և հստակ ձևակերպված լինեն չափանիշները, այնքան կմեծանա դրանց արդյունավետության հնարավորությունը: Իհարկե, լուրջ մարտահրավեր է՝ ստեղծել այնպիսի գործիքակազմ, որոնցով պետք է գնահատվեն դասագրքի բովանդակությունը, տեսքը, մեթոդաբանությունը, կառուցվածքը, ձևը և այլն: Այս խնդիրն առկա է ամբողջ աշխարհում: Դրանց մեծ մասն անչափելի է, հետևաբար, կարևոր է այդ չափանիշները մշակող մասնագետների արհեստավարժությունն ու օբյեկտիվությունը: Գործընթացը պետք է սկսել հետևյալ քայլերից.

- **ներգրավել** փորձառու մասնագետների և բացառել փորձագետների շահերի բախումը,
- **մշակել** գործընթացի՝ կոռուպցիոն ռիսկերը նվազագույնի հասցնելու մեխանիզմներ,
- **մշակել** երկակի ընկալման հնարավորությունը նվազագույնի հասցնող՝ հնարավորինս հստակ և չափելի պահանջներ,
- ստեղծված պահանջները **ներկայացնել** գործընթացում ներգրավված կողմերին (փորձագետներ, հրատարակչության մասնագետներ,

հեղինակներ, մանկավարժներ)՝ գնահատման գործիքի համապատասխան պարզաբանումներով, պահանջների միարժեք ըմբռնում ապահովելու նպատակով,

- պարբերաբար **փոփոխել, թարմացնել և զարգացնել** մշակված պահանջները՝ ժամանակի հրամայականից կախված:

15. Դասագրքաստեղծ և փորձագիտական խմբերում անհրաժեշտ է ընդգրկել գործող, փորձառու, նորարար մանկավարժների, առարկայական ոլորտի տեսաբանների, մեթոդիստների, հոգեբանների և հատուկ մանկավարժների: Այս խմբի անդամների ընտրությունը պետք է ամենաիհանգուցայիններից մեկը լինի և կատարվի մեծ սկզբունքայնությամբ, հետևողականորեն:
16. Հեղինակները պետք է մանկավարժական, մեթոդական պատրաստվածություն ունենան՝ ներառելով մանկավարժական բովանդակային գիտելիքը (*pedagogical content knowledge*), այսինքն՝ յուրաքանչյուր առարկայի կոնկրետ բովանդակության դասավանդմանը լավագույնս նպաստող կրթական փիլիսոփայության, մանկավարժական ռազմավարությունների և մեթոդների ու հնարների իմացումն ու կիրառման կարողությունը:
17. Դասագիրք գրողները պետք է հստակ պատկերացնեն, թե տվյալ նյութն ինչպես է դասարանում կիրառվելու, ինչ ձևերով ու քայլերի հաջորդականությամբ են աշակերտները յուրացնելու այն: Կարելի է նաև պահանջ դնել կա՛մ հեղինակների՝ դպրոցում առնվազն հինգ տարվա դասավանդման փորձի առկայության, կա՛մ հեղինակային խմբերում փորձառու մանկավարժ - մեթոդիստների ընդգրկման:
18. Դպրոցը պետք է ունենա դասագրքերն ու լրացուցիչ նյութերն անկախ ընտրելու հնարավորություն, որպեսզի շուկան կայանա և դառնա մրցակցային:
19. Միևնույն ուսումնական առարկայի համար պետք է ստեղծվեն այլընտրանքային դասագրքեր:
20. Դպրոցներում դասագրքերի ընտրությանը պետք է մասնակցեն առարկայական բոլոր ուսուցիչները՝ ելնելով իրենց աշակերտական լսարանի կարիքներից:
21. Հնարավորության դեպքում ցանկալի է, որ այդ գործընթացին մասնակից դառնան նաև աշակերտական և ծնողական խորհուրդները:

## III. Առաջարկվող լուծումներ

22. Անհրաժեշտ է պարզեցնել դասագրքերի ընտրության գործընթացը՝ հնարավորություն տալով յուրաքանչյուր ուսուցչի՝ աշխատելու իր նախընտրած դասագրքով: Դրա համար պետք է դասագրքի երաշխավորման գործընթացին զուգահեռ այն ներկայացնել որևէ օնլայն հարթակում՝ ապահովելով ուսուցիչների տեղեկացվածությունը այլընտրանքային դասագրքերի վերաբերյալ:
23. Ուսուցիչները պետք է հնարավորություն ունենան դրանք

ուսումնասիրելու և իրենց տպավորությունն ու կարծիքը ընտրության վերաբերյալ այդ հարթակում տեղադրելու, ինչն էլ ավտոմատ կերպով կամրագրի հավանության արժանացած դասագիրքը:

24. Դասագրքերի ընտրությունը կատարելուց առաջ անհրաժեշտ է վերապատրաստման դասընթացներ կազմակերպել ուսուցիչների համար, որպեսզի նրանք ծանոթանան նոր դասագրքերին ներկայացվող պահանջներին:
25. Այսպիսի համակարգով կազմակերպված գործընթացը հնարավորություն կտա՝

- ուսուցչին՝ առավել արդյունավետ կազմակերպել իր մասնագիտական գործունեությունը,
- սովորողին՝ սովորել որակյալ դասագրքով,
- որակյալ դասագիրք տպագրած հրատարակչին՝ ունենալ մեծ տպաքանակ և շահույթ,
- որակյալ դասագիրք ստեղծած հեղինակին՝ ունենալ եկամուտ և ճանաչում,
- որակյալ դասագրքերի հաջողությունը կարող է նպաստել նոր գրվող դասագրքերի որակի բարելավմանը։

26. Դասագրքերի և ուսումնական նյութերի փոփոխությունը չի կարող ունենալ ակնկալվող ազդեցությունը, եթե ուսուցիչը դրանցից օգտվելու արհեստավարժություն չունենա։ Հետևաբար, կարևոր և անհրաժեշտ նախապայման է ուսուցիչների բուհական կրթության և վերապատրաստումների որակի բարձրացումը։
27. Անհրաժեշտ է է քայլեր ձեռնարկել լավագույն մասնագետներին դպրոց ուղղորդելու, մանկավարժական կրթությունը մրցունակ դարձնելու, ուսուցչի աշխատավարձը էապես բարձրացնելու ուղղությամբ։ Կրթական հաջողություններ գրանցած երկրների մեծ մասը իրենց գործունեությունը սկսել են հենց ուսուցչից՝ զուգահեռելով որակյալ ուսումնական ռեսուրսների ստեղծումը որակյալ մանկավարժական ներուժի զարգացման հետ:
28. Դասագրքերը և ուսումնական նյութերը 21-րդ դարի կրթական նպատակներին համապատասխանեցնելու համար դրանք պետք է դարձնել փոխներգործուն, սովորողի ինքնուրույն ուսումնառությունը խթանող, բազմաթիվ հղումներ ու կապեր պարունակող, բաց և ճկուն կառուցվածք ունեցող:
29. **Դասագրքերին ներկայացվող չափանիշները և գործիքակազմը պետք է բաղկացած են հետևյալ բաժիններից.**

- Ընդհանրական չափանիշներ և գործիքակազմ.
- Բովանդակությանը վերաբերող չափանիշներ և գործիքակազմ.
- Ուսուցմանը և ուսումնառությանը վերաբերող չափանիշներ և գործիքակազմ.
- Հմտություններին վերաբերող չափանիշներ և գործիքակազմ.
- Արժեհամակարգին վերաբերող չափանիշներ և գործիքակազմ.
- Կառուցվածքին, ձևավորմանը վերաբերող չափանիշներ և գործիքակազմ.
- Դասագրքի լեզվին վերաբերող չափանիշներ և գործիքակազմ:

## 30. Ընդհանրական չափանիշներ և գործիքակազմ

Այս բաժինն ապահովում է դասագրքերի բովանդակության համապատասխանությունը ՀՀ սահմանադրությանը, Երեխայի իրավունքների համընդհանուր հռչակագրին, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին հռչակագրին, Կրթության մասին ՀՀ օրենքին:

**Բնութագրիչներ**

1. Դասագրքի բովանդակությունը չի հակասում Հայաստանի Հանրապետության սահմանադրության, Երեխայի իրավունքների հռչակագրի և Հաշմանդամություն անձանց իրավունքների մասին հռչակագրի հիմնարար սկզբունքներին:
2. Դասագրքի բովանդակությունը համապատասխանում է կրթության մասին ՀՀ օր պահանջներին:

## 31. **Բովանդակության չափանիշներ և գործիքակազմ**

- Դասագրքի բովանդակությանը վերաբերող պահանջները գուցե ամենակարևորն են, քանի որ մնացած բոլոր չափանիշները բխում են բովանդակությունից և պայմանավորված են բովանդակությամբ:
- Ընդհանուր առմամբ՝ բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին, սովորողների տարիքային զարգացման առանձնահատկություններին, կառուցվի սովորողների նախնական գիտելիքների և հմտությունների վրա:

**Բնութագրիչներ**

1. Բովանդակությունը լիովին համապատասխանում է առարկայական ծրագրին՝ առարկայական ծրագրի բոլոր հիմնական տարրերը:
2. Բովանդակությունը համապատասխանում է ուսումնական նպատակներին և ո խնդիրների լուծմանը:
3. Բովանդակությունը համապատասխանում է սովորողների մակարդակին: Բավ ուշադրություն է դարձված սովորողների նախնական գիտելիքներին և փորձին
4. Տեղեկություններն ու տվյալները հստակ են և ճշգրիտ: Դրանք համապատասխ ուսումնասիրվող գիտության ժամանակակից վիճակին:
5. Տեղեկությունները այնքան են ու այնպիսին, որ տեղ են թողնում հետաքրքրությ ինքնուրույն բավարարման համար և սովորել սովորելու հնարավորություն են տ
6. Մեջբերումների հեղինակները պատշաճ կերպով նշված են:

7. Գաղափարները փոխկապված են: Նոր գաղափարները կառուցվում են հների հ
ներմուծվում են ըստ համապատասխանության/անհրաժեշտության:
8. Առկա է գաղափարների հերթականություն և անընդհատություն, որն ապահով
անցում ուսուցման հիմնական փուլերի միջև:
9. Միմյանց հետ կապված հասկացությունների, գաղափարների և թեմաների միջ
ընդգծված են:
10. Ապահովված են միջառարկայական կապերը:
11. Հասկացությունները ճշգրիտ են և ճիշտ: Դրանք արտացոլում են տվյալ գիտութ
զարգացումները, միտումները:
12. Օրինակները և պատկերները հետաքրքիր ու տեղին են, համապատասխանու
տվյալ տարիքային խմբին:
13. Հարցերն ու առաջադրանքները ձևակերպված են հստակ և պարզ, ուղղված են
տարամակարդակ խմբերին:
14. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, ներառյալ հաշմանդամությ
մարդիկ՝ արտացոլված են բովանդակության մեջ:
15. Բովանդակությունն ու պատկերազարդումը արտացոլում են թե՛ քաղաքային, թ
համայնքների իրականությունը:
16. Բովանդակության բարդության աստիճանը համապատասխանում է սովորողն
առանձնահատկություններին, ուսումնական ծրագրին, ինչպես նաև հարմարեց
կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին:
17. Դասագրքի բովանդակության մեջ արտացոլված են հայկական և/կամ հայաստա
իրականությանը վերաբերող նյութեր և/կամ առաջադրանքներ՝ ըստ պատեհու
18. Բովանդակությունն ապահովում է օպտիմալ հարաբերակցություն գիտականու
մատչելիության միջև:
19. Պահպանված է հավասարակշռություն տեսական և գործնական նյութի միջև: Ց
ստացված գիտելիքներն ինչպես կարելի է օգտագործել գործնականում:
20. Եզրույթները, սահմանումները հստակ են մեկնաբանված:
21. Օգտագործված են տերմինաբանական կոմիտեի կողմից հաստատված եզրույթ
22. Առկա են միևնույն նյութի և երևույթի մասին տարբեր և հավասարակշռված տ
23. Խրախուսում և օգնում է սովորողներին ինքնուրույն ծավալուն տեքստեր կարդ
սովորելու, սեր ու հետաքրքրություն է առաջացնում կարդալու հանդեպ:
24. Ներառված են ընտրված ընթերցանության ցանկեր և/կամ թեմային առնչվող վե
համապատասխան հղումներ:
25. Օրինակները արդիական են, համապատասխանում են իրական աշխարհի փո
նախապատրաստում են 21-րդ դարի մարտահրավերներին:

32. **Ուսուցման և ուսումնառության չափանիշներ և գործիքակազմ**

Լավ դասագիրքը պետք է մանկավարժորեն մտածված և համակարգված լինի՝ ներառելով սովորողներին ուսումնական գործունեության բազմազան ձևերի մեջ ներգրավելուն նպաստող տարրեր, պետք է հնարավորություն տա սովորել սովորելու, գիտելիքը տարբեր համատեքստում կիրառելու: Սովորողների հմտությունների համաչափ զարգացումը հնարավոր է ապահովել մանկավարժական անձնակենտրոն մոտեցման, փոխներգործուն մեթոդների նպատակային կիրառման արդյունքում:

**Բնութագրիչներ**

1. Դասագրքում ներկայացված դիդակտիկ տարրերը բազմազան են:
2. Դասագիրքն ապահովում է փոխներգործուն մեթոդների կիրառումը:
3. Առաջադրանքներն ու վարժությունները կառուցված են պարզից բարդ սկզբունքո
   ունեն հստակ հրահանգներ:
4. Հրահանգները, նկարազարդումները, պարզաբանումները, բառերի բացատրությ
   բառարանը նպաստում են նյութի մատչելիությանը:
5. Դասագիրքն առաջարկում է նույն թեմային վերաբերող դժվարության տարբեր մա
   նյութեր, վարժություններ՝ հնարավորություն տալով դասարանում տարբերակված
   հանդես բերելու:
6. Դասագիրքը նպաստում է սովորողների ինքնուրույն ուսումնառությանը և տարբե
   աղբյուրներից տեղեկությունների ինքնուրույն որոնմանն ու տնօրինմանը:
7. Վերլուծելը, արժևորելը, գնահատելը, կշռադատելը, համադրելը խթանվում են, և 
   դրանք զարգացնող առաջադրանքներ ու վարժություններ:
8. Դասագիրքը նպաստում է քննադատական և ստեղծագործական մտածողության
9. Առկա են ոչ միանշանակ լուծում պահանջող խնդիրներ, բաց հարցերով  և  քննար
   պահանջող առաջադրանքներ, որոնք նպաստում են սովորողների քննադատակա
   ստեղծագործական մտածողության զարգացմանը:
10. Առկա են սեփական մտածական գործընթացները վերլուծելու, կառավարելու, գնա
    սեփական գործողությունները պլանավորելու կարողությունը խթանող վարժությո
    առաջադրանքներ:
11. Բովանդակությունը տրոհված է սովորելուն հարմար բաժինների, որոնք կարող են
    անկախ կամ ճկուն կերպով փոխկապված:
12. Առկա են առաջադրանքներ և նյութեր, որոնք հնարավորություն են տալիս արտա
    տարբեր տեսակետներ, կարծիքներ:
14. Առկա են առաջադրանքներ ուսումնական տարբեր կարողություններով, այդ թվու
    առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար:
15. Ներառված են գործնական, լաբորատոր, հետազոտական (կարճաժամկետ և երկ
    առաջադրանքներ:
16. Դասագիրքը հնարավորություն է տալիս զարգացնելու մտածական ու ստեղծագոր
    հմտությունները:

33. **Հմտությունների չափանիշներ և գործիքակազմ**

Որակյալ դասագիրքը պետք է նպաստի սովորողների հմտությունների զարգացմանը: Ապագայի հասարակության քաղաքացիների հոգեկան առողջության պահպանման և կյանքի որակի ապահովման նպատակով Առողջապահական միջազգային կազմակերպության կողմից ընտրվել են մի շարք կարևոր հմտություններ, որոնք ներկայացված են ստորև, և դասագիրքը պետք է խթանի դրանց զարգացումը:

**Հմտություններ**

1. **Ինքնաճանաչում.** դասագիրքը սովորողին հնարավորություն է տալիս քննելու, հա
   ներկայացնելու իրեն, վերլուծելու իր արարքները, ցանկություններն ու
   նախասիրությունները:
2. **Ինքնագնահատում**. դասագիրքը սովորողին հնարավորություն է տալիս գնահատ

աշխատանքը, վարքը, արժևորելու ուսումնական և անձնային ձեռքբերումները, ը
տեղն ու դերը համայնքում:

3. **Համագործակցություն.** դասագիրքը խթանում է համագործակցությունը, համատ
աշխատանքի կարևորումը, սեփական պատասխանատվության գիտակցումը:
4. **Որոշումների կայացում.** դասագիրքը նպաստում է փոփոխվող իրավիճակներում
կողմնորոշվելու և որոշում կայացնելու կարողությունների զարգացմանը:
5. **Խնդիրներին լուծում.** դասագիրքը նպաստում է տարբեր խնդրահարույց իրավիճ
գնահատելուն և նպատակներն իրագործելիս խոչընդոտները հաղթահարելու
կարողությունների զարգացմանը և տալիս հնարավորություններ՝ հանուն կայուն
զարգացման կրթություն ապահովելու համար:
6. **Ստեղծագործաբար մտածել.** դասագիրքը նպաստում է իրերի ու երևույթների նոր
ընկալմանը, գաղափարները համադրելու կարողությունների ձևավորմանը, ոչ
կաղապարային մտածելակերպի զարգացմանը:
7 **Քննադատաբար մտածել.** դասագիրքը նպաստում է երևույթները տարբեր տեսան
քննելու և եզրահանգումներ անելու, փաստերը և դատողությունները հիմնավորել
կարողությունների զարգացմանը:
8. **Միջանձնային հմտություններ**. դասագիրքը նպաստում է արդյունավետ հաղորդա
շփման, էթիկայի կանոնների յուրացմանը, կոնֆլիկտների հաղթահարման
կարողությունների զարգացմանը:
9. **Ապրումակցում (էմպատիա).** դասագիրքը խթանում է դիմացինի ապրումները հա
և աջակցող վերաբերմունք ցուցաբերելու կարողությունը:
10. **Զգացմունքներին տիրապետելը.** դասագիրքը նպաստում է հուզական տարբեր
իրավիճակներում ինքնատիրապետման զարգացմանը:

34. **Արժեհամակարգի չափանիշներ և գործիքակազմ**

Դասագիրքը պետք է գիտելիքների ձեռք բերմանը և հմտությունների
զարգացմանը զուգահեռ նպաստի նաև սովորողի արժեհամակարգի
ձևավորմանը: Այն պետք է իր հիմքում ունենա համամարդկային ու ազգային
արժեքները զարգացնող ներուժ, նպաստի սովորողի մեջ ժողովրդավարական
և բնապահպանական դրական դիրքորոշումների ձևավորմանը,
խտրականության, անհանդուրժողականության և ապակառուցողական վարքի
բացառմանը:

**Բնութագրիչներ**

1. Բովանդակությունն ու պատկերազարդումը զերծ են կանխակալությունից, չեն պ
որևէ խտրականություն (ըստ սեռի, տարիքի, զբաղմունքի, հաշմանդամության, ռ
կրոնի, մշակույթի, քաղաքական հայացքների, էթնիկ և տարածքային պատկանե
այլ հատկանիշի):
2. Դասագիրքը բազմակարծային է, չի պարունակում միակողմանի, խտրական
դատողություններ: Բովանդակության մեջ չկան չափից շատ ընդհանրացումներ և
կարծրատիպացում:
3. Դասագիրքը հնարավորություն է տալիս արժեքների և դրանց հանդեպ դիրքորոշ
ձևավորմանը:

4. Դասագիրքը նպաստում է շրջապատի հանդեպ հարգանքի և պատասխանատու վերաբերմունքի ձևավորմանը:
5. Դասագիրքը նպաստում է սովորողի անձնային որակների զարգացմանը:
6. Դասագիրքը ապահովում է գենդերային հավասարության սկզբունքները:
7. Դասագիրքը նպաստում է առողջ ապրելակերպի, անվտանգ և պատասխանատո ձևավորմանը:
8. Դասագիրքը նպաստում է բնության հանդեպ խնայող և պահպանող վերաբերմու ձևավորմանը, հնարավորություն է տալիս հանուն կայուն զարգացման կրթությու ապահովելու համար:
9. Դասագիրքը նպաստում է հանդուրժողականության ձևավորմանը և մշակութայի բազմազանությունը որպես առավելություն ընկալելուն:
13. Դասագիրքը նպաստում է մեդիա կրթությանը, մեդիագրագիտությանը:

35. **Կառուցվածքի, ձևավորման չափանիշներ և գործիքակազմ**

Դասագրքի կառուցվածքը չափազանց կարևոր է բովանդակության ընկալման, յուրացման տեսանկյունից: Պետք է բովանդակությունը ներկայացնել ընթերցահաճ և յուրացման համար մատչելի կառուցվածքով ու ձևավորմամբ, որպեսզի դասագիրքը լինի կիրառման տեսանկյունից հարմար և հաճելի:

**Բնութագրիչներ**

1. Բովանդակության կառուցվածքը տրամաբանական է և հարմար ուսումնառությա

2. Ի շնորհիվ առկա ֆունկցիոնալ գործիքների (վերնագրեր, ենթավերնագրեր, սիմվո վահանակներ, սխեմաներ և այլն) բովանդակության կառուցվածքը պարզ է ու հաս
3. Նոր հասկացություններն ու սահմանումները ընդգծված են և նույնական:

4. Առկա է բովանդակության ցանկ, որը ներառում է վերնագրեր, ենթավերնագրեր, անհրաժեշտության դեպքում նաև հակիրճ նկարագրություններ:
5. Առկա են ընդհանուր տեղեկություններ, նշանային համակարգի մեկնաբանություն սովորողներին կողմնորոշող ցուցումներ:
6. Առկա է հիմնական հասկացությունների ցանկ՝ մեկնաբանություններով:

7. Կառուցվածքը հնարավորություն է ընձեռում դասագրքի բազմակի օգտագործմա մեկանգամյա օգտագործման նյութեր՝ լրացվող հարցաշարեր, փակցվող նյութեր, այլն:
8. Դասագիրքն ունի առնվազն երկու գույն: Երկգույն դասագրքի դեպքում գույներից ***պանտոնն*** է:
9. Լիագույն դասագրքի դեպքում նկարազարդումները նախատեսված են օֆսեթ տպ համար:
10. Նկարազարդումները ստեղծված կամ ընտրված են դասագրքի համար և համապա են սովորողների տարիքային զարգացման մակարդակին:
11. Դասագրքի մակետը տրամաբանական է և հետևողական: Նյութերը մտածված են տարածությունն օգտագործված է կարդալու համար հարմար ձևով, ազատ հատվ

ավելորդ ծանրաբեռնված չեն անհարկի նյութերով:
12. Նկարազարդումը՝ լուսանկարները, նկարներն ու գծագրերը տեղին են, արդյունավ
համապատասխան մեկնաբանություններով: Դրանք նպաստում են ուշադրությունն
ուսումնառությունը կենտրոնացնելուն:
13. Լուսանկարները, պատկերներն ու գծագրերը պատկերավոր են դարձնում ասելիքը
համադրված են տեքստին և հաջորդում են մեկնաբանությանը:
14. Նկարազարդումներն ունեն գեղագիտական բարձր որակ:

15. Ոչ պարտադիր նյութերը առանձնացված են տառատեսակով կամ ձևավորման այլ

**36. Դասագրքի լեզվի չափանիշներ և գործիքակազմ**

Դասագրքի լեզուն պայմանավորում է սովորողների լեզվամտածողության ձևավորումը, մտքերն արտահայտելու կարողության զարգացումը: Տեքստերը պետք է առանձնանան լեզվական բարձր որակով, հասկանալի լինեն սովորողին և նպաստեն նրա՝ առանց անհարկի լարվածության ինքնուրույն սովորելուն: Լեզուն պետք է համապատասխանի սովորողների տվյալ տարիքին, կարդալու և ըմբռնելու մակարդակին:

**Բնութագրիչներ**
1. Դասագրքի լեզուն դյուրըմբռնելի է, համապատասխանում է սովորողների տար
զարգացման առանձնահատկություններին, լեզվական իմացության ու բառապ
մակարդակին:
2. Առկա են տարբեր լեզվական կարողություններ ունեցող աշակերտների
հետաքրքրություններին համահունչ տեքստեր կամ առաջադրանքներ:
3. Նոր բառապաշարը ներմուծված է աստիճանաբար և ճիշտ ժամանակին:
4. Նյութը մշակված է տվյալ առարկայի ոճին համապատասխան:
5. Պահպանված է միասնական ոճ տեքստերի ստեղծագործման, փոխառության և
տեղայնացման ժամանակ:
6. Առկա են դժվար ընկալելի եզրույթների և բառապաշարի յուրացումը հեշտացնո
7. Դասանյութերը ծանրաբեռնված չեն նոր եզրույթներով ու անծանոթ բառերով:
8. Եզրույթները, դրանց սահմանումները, օրենքների ձևակերպումները, երևույթն
բացատրությունները համապատասխանում են գիտության մեջ և պրակտիկա
համընդհանուր ընդունվածներին:
9. Ըստ կազմության՝ դասագրքում օգտագործված են միայն պարզ համառոտ, պա
ընդարձակ, դերբայական դարձվածով պարզ ընդարձակ, բարդ համադասակա
ստորադասական նախադասություններ (եթե հակառակը նախատեսված չէ դա
նպատակով):
10. Օգտագործված բառերի ուղղագրությունը համապատասխանում է Տերմինաբա
կոմիտեի կողմից հաստատված նորմերին կամ ՀՀ ԿԳՆ կողմից երաշխավորվա
ուղղագրական բառարաններին:
11. Տեքստերի կետադրությունը համապատասխանում է ժամանակակից հայերեն
կետադրության կանոններին (բացառությամբ՝ հեղինակային մեջբերումների):
12. Լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գրական լեզ
ձևաբանությանն ու քերականությանը:

13. Շարադրանքը բացառում է երկակի ընկալումն ու տարակարծությունը, եթե դա
նախատեսված չէ կոնկրետ նպատակով:
14. Նախադասություններում բառերի առավելագույն քանակն ըստ դասարանների

- 1-ին դասարան – 6 բառ
- 2-րդ դասարան – 8 բառ
- 3-րդ դասարան – 10 բառ
- 4-րդ դասարան –12 բառ
- 5-րդ դասարան – 14 բառ
- 6-7-րդ դասարան – 16 բառ
- 8-9-րդ դասարան – 18 բառ

- Թվարկումների անհրաժեշտությամբ պայմանավորված՝ բացառություննե
ներկայացված են ձևավորման համապատասխան հնարքներով:

**37. Ուսումնաօժանդակ գրականությանը ներկայացվող չափանիշներ և գործիքակազմ**

Ուսումնաօժանդակ գրականությունը նախատեսված է ուսուցչին ուղղորդելու, մեթոդական ցուցումներով օգնելու համար: Այդուհանդերձ, ուսուցչի որակյալ ձեռնարկը չպետք է չափից շատ ուղղորդի, թելադրի, ազատությունից զրկի ուսուցչին, բայց և չպետք է ամեն ինչ թողնի նրա ուսերին կամ հայեցողությանը:

**Բնութագրիչներ**

1. Ուսուցչի ձեռնարկի նախաբանում ներկայացված են դասագրքի բովանդակությ
կառուցվածքին և մեթոդաբանությանը վերաբերող մոտեցումները:
2. Ուսուցչի ձեռնարկում նշված է, թե տվյալ դասի բովանդակության որ հատվածը
առարկայական չափորոշչի որ պահանջին բավարարում:
3. Ուսուցչի ձեռնարկում յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ ներկայացված է ներ
տեքստ՝ էական գաղափարների շեշտադրմամբ (ըստ անհրաժեշտության՝ ուղղ
հղումներով):
4. Ուսուցչի ձեռնարկում յուրաքանչյուր դասի վերաբերյալ ներկայացված են դաս
խնդիրները և այն, թե ինչ կարող է տալ տվյալ դասը սովորողին:
5. Ուսուցչի ձեռնարկում յուրաքանչյուր դասի վերաբերյալ թվարկված են դասն ա
համար անհրաժեշտ ուսումնական նյութերը և պարագաները:
6. Ուսուցչի ձեռնարկում յուրաքանչյուր դասի վերաբերյալ ներկայացված են դաս
դրանց նկարագրությունը և տևողությունը:
7. Ուսուցչի ձեռնարկում յուրաքանչյուր դասի վերաբերյալ ներկայացված են դաս
առաջարկվող մեթոդները:
8. Ուսուցչի ձեռնարկում յուրաքանչյուր դասի նյութի համար ներկայացված են սո
նախնական գիտելիքները վեր հանող հարցեր/առաջադրանքներ՝ անհրաժեշտ
մեկնաբանություններով:

9. Ուսուցչի ձեռնարկում յուրաքանչյուր դասի համար ներկայացված են հավանա
ընթացքի մասին մեկնաբանություններ, խորհուրդներ:
10. Ուսուցչի ձեռնարկում ներկայացված են դասագրքում առկա հարցաշարերի, թ
օգտագործման ձևերը:
11. Ուսուցչի ձեռնարկում ներկայացված են տարբեր կարողություններով, ուսումն
կարիքներով, հակումներով սովորողների ներառման համար ուղղորդումներ, 
դասագրքի առաջադրանքների կիրառման մեկնաբանություններ:
12. Ուսուցչի ձեռնարկը պարունակում է գործնական և լաբորատոր աշխատանքն
անցկացման վերաբերյալ մեթոդական ցուցումներ:
13. Ուսուցչի ձեռնարկը պարունակում է գնահատման ձևերի և միջոցների
նկարագրություններ:
14. Ուսուցչի ձեռնարկը պարունակում է դասագրքում յուրաքանչյուր բարդ խնդրի
առաջադրանքի և հարցի ներառման նպատակը և դրանց վերաբերյալ ցուցում
15. Ուսուցչի ձեռնարկում ներկայացված են ցուցումներ ռեֆլեքսիայի, ինքնագնահ
փոխադարձ  գնահատման համար:
16. Ուսուցչի ձեռնարկում ներկայացված են ներառարկայական կապերը և դրանց
մոտեցումները:
17. Ուսուցչի ձեռնարկում ներկայացված են վերառարկայական կապերը և դրանց
մոտեցումները:
18. Ուսուցչի ձեռնարկում ներկայացված են անվանացանկեր, հավելվածներ, մուլ
բազմազան աղբյուրներ՝ համապատասխան հղումներով:
19. Ուսուցչի ձեռնարկում ներկայացված են դասագրքի տարբեր թեմաների միջև 
կապերը և ուսումնական գործընթացում դրանք ապահովելու մոտեցումները: